ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 01 >> հոկտեմբեր 2014թ. N 49

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հունիսի 30-ի N 127-Ա որոշումը, <<Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լ. Դավթյանին (համաձայնությամբ):

3.Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի <<1>> - ի

N 29 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թովմասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

Անդամներ՝

Ս. Ղուկասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Հ. Ասոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Կ. Բարսեղյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Հ. Ավետիսյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ